Բիենալեի բացումը տեղի ունեցավ օպերային կից գալերեայում, որն ամենամեծն էր եւ որտեղ ներկայացված էր եգիպտական արվեստը: Բացի այդ, 7 տարբեր սրահ էլ կար, իսկ Հայաստանին տրված էր Զամալեքի Fine Art Education College-ի (Գեղեցիկ արվեստների կրթության կենտրոնի) նրանք, ովքեր կազմակերպել էին նաեւ եղբայրական այն պետությունների ներկայացուցիչները, որոնց երկիրը ներկայացնող կար նաեւ ժյուրիի կազմում»: Մրցանակ ստանալ-չստանալու փաստը, արվեստագետների ասելով, այնքան էլ մտահոգիչ չէ, որքան «թիկունք» չունենալու խնդիրը: Մյուս երկրների ար- անհամեմատ բարձր է: Օրական երեւի 500 հոգի գալիս է այդ ցուցասրահ, եւ վատ չէր լինի, որ հետաքրքրվողները հնարավորություն ունենային Հայաստանի արվեստը ներկայացնող պատկերագիրք ձեռք բերել: Առիթ է: «Մշակույթի նոր նախարարի օրոք, կարծում եմ, կվերանայվի այս խնդիրը», ասում է Արամ

# Հայաստանի «համեստ» ներկայություն Եգիպտոսի բիենալեում

***Դեկտեմբերի 15-ին Կահիրեում բացվեց արվեստի 6-րդ միջազգային բիենալեն, որ ներառում է գեղանկար, քանդակ, գրաֆիկա: Հայաստանը 8 տարվա պատմություն ունեցող այս բիենալեին մասնակցում էր առաջին անգամ, իսկ մայիսին ներկայացել էր խեցեգործության թվով 3-րդ բիենալեում: Եգիպտոսի նախագահ Հոսնի Մուբարաքը նպատակ ունի աշխուժացնել երկրի մշակութային կյանքը, եւ անցկացվող բիենալեները հնարավորություն են ընձեռում նախ՝ 2 տարին մեկ ներկայացնել սեփական արվեստը, ապա՝ կապեր ստեղծել աշխարհի տարբեր երկրների հետ: Հայաստանից 4 արվեստագետ՝ Արամ Իսաբեկյանը, Արա Հայթայանը, Սամվել Համբարձումյանը եւ Ալեքսանդր Ավետիսյանը, մասնակցեց այդ բիենալեին՝ 1-ական աշխատանքով: Թեեւ մրցանակները, ըստ տարիների արդյունքի, տրվում են միայն հյուրընկալող երկրի արվեստագետներին (ինչը, մեղմ ասած, զարմանալի է) եւ բնականաբար, հայ արվեստագետները որեւէ պարգեւի չեն արժանացել, բայց իրենց իսկ գնահատմամբ, մասնակցությունն ամեն դեպքում հետաքրքիր էր, նաեւ՝ կարեւոր:***

սրահը, ուր զուգահեռ ներկայացվում էր նաեւ Բոսնիայի եւ Զահրեհնի արվեստը, պատմում է գեղանկարիչ Արա Հայթայանը: Նրա ասելով, Հայաստանի դերը բիենալեում ինչ-որ տեղ ներկայացուցչական է եղել՝ 4 արվեստագետի (2 գեղանկարիչ՝ Արա Հայթայան, Արամ Իսաբեկյան, մեկ քանդակագործ՝ Ալեքսանդր Ավետիսյան, 1 գրաֆիկ՝ Սամվել Համբարձումյան) մասնակցություն բոսնիացի 1 եւ զահրեհնցի 2 արվեստագետի կողքին: Ի դեպ, ԱՄՆ-ն էլ 1 արվեստագետով է ներկայացված եղել: Թեմատիկ սահմանափակում չի եղել: Բայց օրու փոխարեն, Եգիպտոսի մշակույթի նախարարության՝ դեսպանատուն ուղարկված տեղեկագրում նշված են եղել պայմանները (սահմանափակ թվով մասնակից, որոշակի քանակությամբ գործ, ստեղծագործության չափերը չպիտի մեծ լինեն 1 մետրից, մերկ կին չպետք է լինի): «Այնտեղ պարզվեց, որ նման սահմանափակումներ չկան: Շատ երկրներ ստեղծագործությունների մեծ քանակ են ներկայացրել: Մեզ ասացին, եթե դուք էլ ավելի շատ ներկայացնեիք, միգուցե մրցանակ շահեիք», ասում է Արա Հայթայանը: «Աշխարհի ոչ մի երկրում այդպիսի բիենալե չի լինի, որտեղ այդքան շատ արաբական երկիր մասնակցի, ասում է Արամ Իսաբեկյանը: Մեզ ասում էին, որ նկարներում մերկ կին չպիտի լինի: Տեղում պարզվեց, որ մենք «ամենահամեստ» ձեւով ենք ներկայացել: Ամենատարբեր այլանդակություն կար, եվրոպական, ամերիկյան արվեստի կապկում, մակարդակապես ցածր աշխատանքներ»: Արա Հայթայանը «օրինաչափություն» է նկատել մրցանակաբաշխության մեջ. «Ստացան



Արամ Իսաբեկյան, Սամվել Համբարձումյան, Ալեքսանդր Ավետիսյան, Արա Հայթայան

վեստագետները ֆինանսական դժվարություն չեն ունեցել՝ հոգացել է պետությունը: Իսկ հայ արվեստագետները սեփական միջոցներով են իրենց մասնակցությունն ապահովել: «Ինչ-որ տեղ նվաստացնող էր ոչ միայն այն հանգամանքը, որ ապրում էինք ոչ թանկ հյուրանոցում, այլեւ այն, որ մեր նկարները շրջանակ էլ չունեին, ասում են նրանք: Կիպրոսի մշակույթի նախարարությունը, որ ներկայացրել էր 3 նկարչի, հրաշալի պատկերագիրք էլ էր տպագրել, որը յուրաքանչյուր այցելուի բաժանվում էր, պատմում է Արան, իսկ մենք մեր անհատական փոքրիկ պատկերագրքն էինք դրել մի անկյունում, որ երկիր ամբողջական, հավաքական իմաստով, չէր կարող ներկայացնել»:

Ի դեպ, այնտեղ, որտեղ ցուցադրվում են հայ նկարիչները, դահլիճի որակը թեեւ զիջում է, բայց այցելուների հաճախելիության առումով

Իսաբեկյանը, եւ այսուհետ պետական հովանավորություն կլինի նման ձեռնարկների ժամանակ»:

Պրն Իսաբեկյանի ասելով, արվեստագետի համար անհրաժեշտ էր լինել Եգիպտոսի նման մի երկրում, որի մշակութային արժեքների մասին միայն լսել կամ կարդացել ենք: «Այդ հարստությունները տեսնել չէինք կարողանա, եթե չլիներ Եգիպտոսում Հայաստանի Հանրապետության դեսպանատունը, որի յուրաքանչյուր աշխատակից մեզ շրջապատել էր հոգատարությամբ», ընդգծեց Արամ Իսաբեկյանը:

Կահիրեում անցկացվող արվեստի բիենալեն դեռ շարունակվում է: Մնում է ակնկալել, որ մեր երկիրը ներկայացնող 4 արվեստագետների ստեղծագործությունների միջոցով Հայաստան աշխարհը հետաքրքիր հասցե կդառնա արվեստի երկրպագուների համար:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ